
**ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ
ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

ՓՈԼԱՂՅԱՆ Կ. Ռ.

Քաղաքացու կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին վնաս պատճառելուց ծագող պարտավորությունների համակարգում իրենց ընդգծված տարբերակիչ գծերով առանձնանում են շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման պարտավորությունները: Դելիկտային (արտապայմանագրային) պարտավորությունների այս տեսակի գոյության և իրավական կարգավորման սոցիալական անհրաժեշտությունը վաղուց հիմնավորված է և տարակարծությունների տեղիք տալ չի կարող: Դրա հետ միաժամանակ ինչպես իրավակիրառական պրակտիկայում, այնպես էլ քաղաքացիական իրավունքի տեսության մեջ դելիկտային պարտավորությունների այս հատուկ տեսակի առաջացման համար անհրաժեշտ և բավարար պայմանների, ինչպես նաև այս պարտավորությունների հետևանքով ծագող քաղաքացիաիրավական պատասխանատվության կապակցությամբ առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց վերհանումն իրավաբանական գրականության մեջ դրական է անդրադառնում քաղաքացիական իրավունքի այս ինստիտուտի զարգացման և դրա իրավական կարգավորման արդյունավետ կառուցակարգերի սահմանման գործընթացի վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով վնաս պատճառելու դեպքում դելիկտային պարտավորության առաջացման պայմանները և վնաս պատճառելու մեխանիզմները, ինչպես արդարացիորեն նշում են Վ. Սմիռնովը և Ա. Սոբչակը, էապես տարբերվում են դելիկտային պարտավորությունների առաջացման ընդհանուր կանոններից, ինչով էլ բացատրվում է նշված դեպքերի՝ որպես դելիկտային պարտավորությունների հատուկ տարատեսակի առանձնացման անհրաժեշտությունը¹:

Հաշվի առնելով դելիկտային պարտավորությունների նշված տեսակի արդիականությունը և այն հանգամանքը, որ ներկայումս քաղաքացիաիրավական գրականության մեջ կարևորվում և մեծ տեղ է հատկացվում առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության հիմնախնդիրների ուսումնասիրություններին, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ քաղաքացու կյանքին կամ առողջությանը և իրավաբանական անձի գույքին պատճառված վնասի համար ծագող պարտավորությունների կառուցակարգում առանձնահատուկ դեր են խաղում առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար առաջացած պարտավորությունները՝ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել քննվող ոլորտում առկա մի շարք

¹ См. у Смирнов В. Т., Собчак А. А., *Общее учение о деликтных обязательствах в советском гражданском праве*, Л., 1983, с. 33.

հասկացություններ և վեր հանել իրավական կարգավորման որոշ հիմնախնդիրներ:

Հարկ է նշել, որ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն նախատեսված էր նաև Հայաստանի 1923 և 1964 թվականների քաղաքացիական օրենսգրքերով: Սակայն, ինչպես նշում է Գ. Ղարախանյանը, Հայաստանի Հանրապետության 1998 թ. քաղաքացիական օրենսգրքում² այդ հարցը կարգավորվում է առավել մանրամասն: Ըստ որում, եթե նախկինում այն անվանվում էր «պատասխանատվություն առավել վտանգի աղբյուրով պատճառած վնասի համար», ապա ՀՀ քաղորի 1072-րդ հոդվածում՝ «պատասխանատվություն շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառած վնասի համար»³:

Ներկայումս վնաս պատճառելուց ծագող պարտավորությունների ընդհանուր համակարգից առանձնացնելով նաև շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար ծագող պարտավորությունները՝ ՀՀ քաղորը դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորում է առանձին հոդվածով: Համաձայն ՀՀ քաղորի 1072-րդ հոդվածի՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էլեկտրաէներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Անդրադառնալով անձի կյանքին կամ առողջությանը շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հետևանքով ծագող պարտավորությունների ուսումնասիրությանը՝ հարկ է նշել, որ և՛ քաղաքացիական իրավունքի տեսության մեջ, և՛ իրավակիրառական պրակտիկայում առկա են մի շարք տարակարծություններ առավել վտանգի աղբյուր հասկացության, պատասխանատվության ծագման համար անհրաժեշտ և բավարար պայմանների, պատասխանատվության սուբյեկտների և այլ հարցերի վերաբերյալ:

«Առավել վտանգի աղբյուր» տերմինն առաջին անգամ օգտագործվել է Խորհրդային Ռուսաստանի 1922 թ. քաղաքացիական օրենսգրքի 404-րդ հոդվածում: Այդ տարիներին երկրի դատական պրակտիկան արտահայտում էր այն կարծիքը, որ առավել վտանգի աղբյուրների թվին պետք է դասվեն այնպիսի փոխադրամիջոցները, ինչպիսիք են ավտոմեքենաները, մոտոցիկլետները, ծովային և գետային նավերը: Այս ամենը նպատակ ուներ լրացնելու հոդվածում նշված առավել վտանգի աղբյուրների ցանկը: Սակայն այն ժամանակ ո՛չ օրենսդիրը, ո՛չ էլ դատական պրակտիկան չձևավորեցին առավել վտանգի

² Այսուհետև՝ ՀՀ քաղոր:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս երկրորդ, Ե., 2001, էջ 623:

աղբյուրի վերաբերյալ ամփոփիչ եզրակացություններ: Այս կապակցությամբ օրենսդիրն առաջ քաշեց երկու հասկացություն.

ա) աղբյուրի առավել վտանգավորությունը շրջապատի համար,

բ) կազմակերպությունների և քաղաքացիների գործունեությունը, որը կապված է նշված վտանգի հետ⁴:

Չունենալով միասնական իրավաբանական ձևակերպում՝ «առավել վտանգի աղբյուր» հասկացության խնդիրը դարձավ տեսական բուռն ուսումնասիրությունների առարկա՝ տեղիք տալով բազմաթիվ և բազմատարբերակ մոտեցումների ի հայտ գալուն: Մասնավորապես, քաղաքացիաիրավական գրականության մեջ տարբեր հեղինակներ հանդես եկան առավել վտանգի աղբյուրի տարբեր ձևակերպումներով, որոնք իրենց ամբողջության մեջ հանգում էին այն եզրակացությանը, որ առավել վտանգի աղբյուրը որոշակի տեսակի գործունեություն է, որը շրջապատի համար առավել վտանգ է ստեղծում: Այսպես, օրինակ, Ս. Դոնցովը և Մ. Մարինինան առավել վտանգի աղբյուրը բնորոշում են որպես նյութական աշխարհի այնպիսի օբյեկտներին տիրապետող սուբյեկտների գործունեություն, որոնք, օժտված լինելով վնասակար ազդեցությամբ, իրենց օգտագործման ընթացքում չեն ենթարկվում լրիվ կառավարման, որի հետևանքով առաջանում է մեծ հնարավորություն՝ վնասելու շրջապատող քաղաքացիներին, նրանց գույքին, ինչպես նաև կազմակերպությունների գույքին⁵, իսկ ըստ Մ. Շիմինովայի՝ անձի կյանքի և առողջության համար առավել վտանգի աղբյուրների թվին են դասվում առարկաները, սարքերը, որոնք ունեն առանձնահատուկ որակներ, որի պատճառով դրանք օգտագործման ընթացքում առաջացնում են այնպիսի էներգիա կամ դրսևորում են այնպիսի հատկություններ, որոնք տեխնիկայի տվյալ մակարդակի զարգացման պատճառով չեն ենթարկվում մարդու բացարձակ հսկողությանը և վնաս պատճառելու մեծ հնարավորություն են ստեղծում⁶:

Ուշագրավ տեսակետ են հայտնում նաև Լ. Մայդանիկը և Ն. Մերգեվան՝ առավել վտանգի աղբյուր համարելով այն իրերը, սարքավորումները, որոնք գտնվում են շահագործման մեջ և այդ շահագործման ընթացքում առաջացնում են առավել վտանգավորություն շրջապատի համար, օրինակ, շարժվող գնացքը, աշխատող հաստոցը և այլ մեխանիզմներ, որոնք աշխատում են մեխանիկական, էլեկտրական կամ այլ շարժիչների միջոցով⁷:

Առավել վտանգի աղբյուրի վերաբերյալ իր ուրույն տեսակետն է արտահայտել նաև Օ. Կրասավչիկովը, որն առավել վտանգի աղբյուրները բնութագրում է որպես նյութական աշխարհի իրեր, որոնք հիմնականում ստեղծված են մարդու կողմից:

⁴ Այս մասին տե՛ս նաև **Загорулько А. И.**, *Обязательства по возмещению вреда*, Харьков, 1996, с. 61; **Красавчиков О. А.**, *Возмещение вреда, причиненного источником повышенной опасности*, М., 1966, с. 7.

⁵ Տե՛ս **Донцов С. Е., Маринина М. Я.**, *Имущественная ответственность за вред, причиненный личности*, М., 1986, с. 39.

⁶ Տե՛ս **Шиминова М.**, *Возмещение вреда, причиненного здоровью*, М., 1972, с. 22.

⁷ Տե՛ս **Майданик Л. А., Сергеева Н. Ю.**, *Материальная ответственность за повреждение здоровья*, М., 1953, с. 25.

Ինչպես նշում է հեղինակը, «Հասկանալի է, որ այդպիսի աղբյուր են ոչ բոլոր առարկաները, այլ միայն այնպիսիք, որոնք օժտված են առանձնահատուկ հատկություններով», ապա ավելացնում է, որ առավել վտանգի աղբյուրի իրեր են միայն նյութական աշխարհի այն առարկաները, որոնք ունեն յուրահատուկ քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ որակներ⁸:

Ընդհանրացնելով վերոնշյալ կարծիքները՝ կարելի է փաստել, որ «առավել վտանգի աղբյուր» հասկացության բացահայտումը և միասնական իրավաբանական ձևակերպման ամրագրումն էական նշանակություն ունեն տվյալ ինստիտուտի զարգացման գործում: «Առավել վտանգի աղբյուր» հասկացության վերաբերյալ տեսակետներ են արտահայտել նաև բազմաթիվ այլ հեղինակներ: Դրանք միայն օգնում են համեմատության մեջ գտնել կարգավորման առավել նպատակահարմար տարբերակը: Ընդհանուր տեսակային հատկանիշների հիման վրա խմբավորելով նշված հարցի կապակցությամբ արտահայտված կարծիքները՝ կարող ենք ասել, որ իրավաբանական գրականության մեջ «առավել վտանգի աղբյուր» հասկացության վերաբերյալ ձևավորվել են երկու ընդհանրական մոտեցումներ: Դրանցից առաջինն առավել վտանգի աղբյուրը բնութագրում է որպես շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեության որոշակի տեսակ (գործունեության տեսություն), իսկ մյուսը՝ որպես նյութական աշխարհի որոշակի առարկաներ, որոնք մարդու կողմից լիակատար վերահսկման ենթակա չեն և օժտված են շրջապատի համար վտանգավոր հատկություններով (օբյեկտի տեսություն)⁹:

Մեր կարծիքով, «առավել վտանգի աղբյուր» հասկացությունը պետք է բացահայտվի վերոնշյալ դիրքորոշումների դրական կողմերի համադրմամբ, քանի որ և՛ «գործունեության» տեսության, և՛ «օբյեկտի» տեսության դիրքերից խնդրի լուծումը կլինի խիստ միակողմանի: Ակնհայտորեն որոշակի գործունեությունը չի կարող համարվել առավել վտանգի աղբյուր՝ առանց նյութական աշխարհի կոնկրետ առարկայի, և, ընդհակառակը, որոշակի իրն առավել վտանգի աղբյուր չի կարող դիտվել այդ իրի կապակցությամբ մարդու ընդգծված գործունեության բացակայության պայմաններում:

Այսպիսով, համադրելով քաղաքացիաիրավական գրականության մեջ առավել վտանգի աղբյուրի վերաբերյալ արտահայտված վերոնշյալ և այլ տեսակետները՝ կարող ենք եզրակացնել, որ առավել վտանգի աղբյուր են որոշակի գործունեությունը, ինչպես նաև նյութական աշխարհի այն իրերը, որոնք, ստեղծված լինելով և օգտագործվելով մարդու կողմից, ունենալով մեխանիկական, քիմիական, կենսաբանական և այլ առանձնահատկություններ, որոշ դեպքերում չեն ենթարկվում մարդու լիարժեք կառավարմանը (վերահսկմանը), և որոնց շահագործման ընթացքում բարձրանում է դրանց կողմից շրջապատողներին հասցվելիք վնասի հնարավորությունը:

⁸ Տե՛ս **Красавчиков О. А.**, նշվ. աշխ., էջ 29, 30:

⁹ Տե՛ս *Гражданское право. Учебник, т. 3 (под ред. Сергеева А. П., Толстого Ю. К., М., 2001, с. 38-39).*

Քանի որ տվյալ դեպքում խոսվում է շրջապատին վնաս հասցնելու պոտենցիալի, այսինքն՝ կոնկրետ իրի կոնկրետ հատկության մասին, անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե որպես առավել վտանգի աղբյուր հանդես գալու համար ինչ վիճակում պետք է գտնվեն իրերը: Ինչպես նշվեց, որպես առավել վտանգի աղբյուր պետք է ընդունել այն իրերը, սարքավորումները, որոնք գտնվում են շահագործման մեջ և այդ շահագործման ընթացքում շրջապատի համար առաջացնում են առավել վտանգավորություն: Սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր իրերն են իրենց առավել վտանգը դրսևորում շահագործման ընթացքում: Օրինակ, քիմիական նյութերը վտանգավոր են նաև այն ժամանակ, երբ գտնվում են տարաներում և ակտիվորեն չեն օգտագործվում: Անշուշտ, կան իրեր և առարկաներ, որոնք առավել վտանգի աղբյուր կարող են դառնալ միայն ակտիվ օգտագործման ժամանակ: Օրինակ, կարծում ենք՝ չենք կարող պատասխանատվության ենթարկել կանգառում կամ տան բակում կանգնած ավտոմեքենայի վարորդին, եթե անչափահասը բակում խաղալու ժամանակ պատահաբար դիպել է մեքենային և վնասվել: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Զագորուլկոն, վնասը կարող է պատճառվել այնպիսի գործունեության ընթացքում, որը կապված է շրջապատի համար առավել վտանգի հետ, բայց որն առավել վտանգի աղբյուր չէ, և հակառակը, վնասը կարող է պատճառվել օբյեկտների պահպանման, օգտագործման կամ տեղափոխման ընթացքում, որոնք առավել վտանգի աղբյուր են, սակայն վնասը հասցվում է դրանց՝ ոչ որպես առավել վտանգի աղբյուրի հատկություններով: Եվ, որպես օրինակ, հեղինակը բերում է ուղևորի ոտքը վնասելը, որը տեղի է ունեցել կանգնած գնացքից իջնելիս: Այս դեպքի համար, կարծում է Ա. Զագորուլկոն, առավել վտանգի աղբյուրով պատասխանատվության քաղաքացիական դատավարության նորմը կիրառելի չէ, քանի որ վնասը պատճառված չէ առավել վտանգի աղբյուրով, չնայած դրա շահագործման փաստն առկա է: Հեղինակը կարծում է, որ կանգնած գնացքը չի կարելի դիտել որպես առավել վտանգի աղբյուր¹⁰: Ուրեմն, ուրիշին վնաս պատճառելուց ծագող պարտավորություններում առավել վտանգի աղբյուրի առկայությունը կամ բացակայությունը փաստելու համար առաջնային նշանակություն է ձեռք բերում ոչ թե տվյալ իրը տիրապետող անձի, այլ կոնկրետ իրի, դրա հնարավոր վնասակար հատկությունների վերհանումը: Հետևաբար, խիստ որոշակի կարևորություն է ստանում նաև առավել վտանգի աղբյուրների դասակարգումը:

Ինչպես նշվեց, ՀՀ քաղորդի 1072-րդ հոդվածի համաձայն, «Իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցներ, սարքերի, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրագործում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրի պատճառած վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է

¹⁰ См. у Загорулько А. И., նշվ. աշխ., էջ 64:

անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով»։ Այսպիսով, սահմանելով շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեության տեսակները՝ օրենսդիրը մինևույն ժամանակ դատարանին հնարավորություն է տվել անհրաժեշտության դեպքում ընդլայնել այդ ցանկը։ Առաջին հայացքից վերոնշյալ դրույթը հղի է բազմաթիվ չարաշահումներով, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շրջապատի համար առավել հնարավոր վտանգ պարունակող գործունեության տեսակների սպառնիչ ցանկն օրենքով սահմանելը գրեթե անհնար և աննպատակահարմար է (քանի որ գործունեության յուրաքանչյուր նոր տեսակի ի հայտ գալու դեպքում, ինչը կապիտալիստական հասարակարգի և գիտության ու տեխնիկայի առաջընթացի նման տեմպերի պայմաններում ուղղակի անխուսափելի է, քանի որ օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն կառաջանա), մեր կարծիքով, նշված նորմն իրավաչափ է և այս ոլորտում արդարադատության իրականացման ընթացքում որևէ խնդիր չի առաջացնի։

Որպես ասվածի վկայություն կարող է լինել Հայաստանի հին և նոր քաղաքացիական օրենսգրքերի համեմատական ուսումնասիրությունը։ Ա. Բեյակովան գրում է, որ ՌԽՖՍՀ 1922 թ. քաղաքացիական օրենսգրքը չէր նշում այնպիսի գործունեության առավել վտանգի աղբյուր լինելը, ինչպիսին է ավտոմեքենան, չնայած պրակտիկան օրենսգրքի ուժի մեջ մտնելուն պես անվիճելիորեն ապացուցում էր ավտոմեքենաների այդպիսին լինելը¹¹։ Եվ ընդհակառակը, 1922 թ. օրենսգրքում որպես առավել վտանգի աղբյուր խոսվում էր վառվող նյութեր վաճառողների մասին։ Ներկայումս ո՛չ Ռուսաստանի Դաշնության, ո՛չ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերում այդ մասին չի նշվում, սակայն կարծում ենք, որ առանձին դեպքերում այս նյութերը և դրանց տիրապետելը նույնպես կարող են դիտվել որպես առավել վտանգի աղբյուր։

Արդեն նշեցինք, որ առավել վտանգի աղբյուրների լրիվ և ամբողջական թվարկում, ինչպես նաև դասակարգում չկա։ Մինևույն առարկան կամ իրը տարբեր իրավիճակներում կարող է և՛ դիտվել որպես առավել վտանգի աղբյուր, և՛ ոչ¹²։ Այս հարցի առթիվ ևս իրավաբանական գրականության մեջ առկա են որոշակի տարակարծություններ։ 1920-30-ական թվականներին խորհրդային հեղինակների կարծիքով օրենսդիրը պետք է սահմանի գործունեության առավել վտանգի աղբյուրների ամբողջական ցանկը, սակայն վերջին ժամանակներս հեղինակների մեծ մասն արտահայտում է այն տեսակետը, որ օրենքով անհնար է սահմանել գործունեության առավել վտանգի աղբյուրների բոլոր տեսակները¹³։ Մեր կարծիքով, այս մոտեցումն ունի իր տրամաբանական հիմնավորումը։

¹¹ См. у **Белякова А. М.**, Возмещение вреда, причиненного источником повышенной опасности, М., 1967, с. 5.

¹² См. у **Абашин Э.**, Возмещение вреда: учебно-практическое пособие (серия: "Юридические эссе"), М., 2000, с. 33.

¹³ См. у **Агарков М. М.**, Обязательства из причинения вреда, М., 1962, с. 68.

Սակայն առավել վտանգի աղբյուրի մասին առարկայական պատկերացում կազմելու համար կարծում ենք, որ ամեն դեպքում այդ օբյեկտները քաղաքացիաիրավական գրականության մեջ ենթակա են որոշակի դասակարգման՝ հիմքում ունենալով դրանց ընդհանուր տեսակային կոնկրետ հատկանիշները: Այս օբյեկտների հետաքրքիր դասակարգում է առաջարկում Օ. Կրասավչիկովը, որն առանձնացրել է գործունեության առավել վտանգի աղբյուրների հետևյալ հիմնական չորս խմբերը.

ա) ֆիզիկական, որոնք իրենց հերթին բաժանվում են մեխանիկականի (օրինակ՝ տրանսպորտը), էլեկտրականի (օրինակ՝ բարձր լարվածության համակարգերը) և ջերմայինի,

բ) ֆիզիկաքիմիական, որոնց թվին դասվում են ռադիոակտիվ նյութերը,

գ) քիմիական, որոնք բաժանվում են թունավորողների (օրինակ՝ թույները), պայթյունավտանգների (օրինակ՝ որոշ գազեր) և հրավտանգների (օրինակ՝ վառելիքի որոշ տեսակներ),

դ) կենսաբանական, որոնք բաժանվում են կենդանաբանականի (օրինակ՝ վայրի կենդանիները) և միկրոկենսաբանականի¹⁴:

Քննելով առավել վտանգի աղբյուր հանդիսացող առարկաների դասակարգման հարցը՝ պետք է նշել, որ դրանց շարքում որոշակի առանձնահատկություն ունեն կենդանիները: ՌԽՖՍՀ 1922 թ. քաղաքացիական օրենսգրքում առավել վտանգի աղբյուրների թվին էին դասված նաև վայրի կենդանիները: Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքացիական օրենսդրությունը գործունեության առավել վտանգի աղբյուրների դասակարգման մեջ չի նշում, որ պատասխանատվության սուբյեկտ կարող են դառնալ վայրի կենդանիներ պահողները: Սակայն սրանից չի հետևում, որ վայրի կենդանիները դադարել են առավել վտանգի աղբյուր լինելուց, իսկ նրանց տիրապետողները՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության սուբյեկտներ: Կարծում ենք՝ և՛ վայրի կենդանիների, և՛ տնային կենդանիների կողմից ուրիշին վնաս պատճառելու դեպքում դրանց՝ որպես առավել վտանգի աղբյուր դիտելու հարցը պետք է կախված լինի կոնկրետ գործի հանգամանքներից¹⁵: Հարկ է նշել, որ որոշ տեսաբաններ ուշադրության արժանի գույզահեռներ են անցկացրել կենդանիների հասցրած վնասի համար պատասխանատվության և փոքրահասակի կողմից վնաս պատճառելու դեպքում առաջացող քաղաքացիաիրավական պատասխանատվության միջև՝ շեշտը դնելով հակաիրավական արարքի նկատմամբ վնաս պատճառողի սուբյեկտիվ վերաբերմունքի առանձնահատկությունների վրա¹⁶:

ՀՀ քաղօրի 145-րդ հոդվածի համաձայն՝ կենդանիների նկատմամբ կիրառվում են գույքի մասին ընդհանուր կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով: Սակայն ՀՀ քաղօրը չի պարունակում կոնկրետ նորմ, որտեղ կենդանիները կարող են դիտվել որպես առավել վտանգի աղբյուրներ:

¹⁴ Տե՛ս **Красавчиков О. А.**, նշվ. աշխ., էջ 41-64:

¹⁵ Տե՛ս նաև **Абашин Э.**, նշվ. աշխ., էջ 35:

¹⁶ Տե՛ս **Բեքմեդյան Գ.**, Անձի կյանքին կամ առողջությանը հասցված վնասի հատուցման պարտավորություններ, Ե., 2002:

Այնուամենայնիվ, ՀՀ քաղաքի 1072-րդ հոդվածի ձևակերպումից, ինչպես նաև եղած իրավակիրառական պրակտիկայից կարելի է եզրակացնել, որ կենդանիները նույնպես որոշ դեպքերում կարող են դիտվել որպես առավել վտանգի աղբյուրներ¹⁷: Անշուշտ, տվյալ դեպքում, որպես պատասխանատվության սուբյեկտ, հանդես են գալիս կենդանիների սեփականատերերը: Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ կենդանիների նկատմամբ հսկողությունը կարող է դրվել այլ անձանց վրա, սեփականատերը կարող է ազատվել պատճառված վնասի համար քաղաքացիաիրավական պատասխանատվությունից:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, առավել վտանգի աղբյուր հասկացության շուրջ առկա են գիտական ամուր հիմքեր ունեցող բազմաթիվ տեսակետներ, ինչն իր հերթին խոսում է նշված հարցի կարևորության մասին:

ПОНЯТИЕ ИСТОЧНИКА ПОВЫШЕННОЙ ОПАСНОСТИ ДЛЯ ОКРУЖЕНИЯ

ПОЛАДЯН К. Р.

Резюме

Как в теории гражданского права, так и на практике возникают многочисленные проблемы, связанные с применением особого вида гражданско-правовой (деликтной) ответственности, которая возникает в процессе деятельности, создающей повышенную опасность для окружающих. Наиболее спорными являются вопросы определения необходимых и достаточных условий несения ответственности за вред, причиненный источником повышенной опасности. Теоретическое осмысление вышеуказанных проблем может положительно повлиять на правоприменительную практику, а также стать благотворной основой совершенствования законодательства.

В качестве юридической категории понятие "источник повышенной опасности" входит в понятийную систему гражданско-правовой науки. Заслуживающими внимания являются вопросы возникновения обязательств по возмещению ущерба, причиненного источником повышенной опасности. В связи с этим возникает множество проблем, связанных с определением размера ущерба, подлежащего возмещению.

Разные подходы к определению института ответственности за вред, причиненный источником повышенной опасности, существующие в юридической науке, требуют тщательного анализа вышеуказанных проблем, в том числе путем сравнительно-правового метода исследования.

¹⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս երկրորդ, էջ 624: